

ճանչցող Կիլիկիցի ճամբորդներու տեղեկութիւններէն ու տեղացիներու ճամբորդական նոթերէն ու յիշողութիւններէն պատուիրակներ ունենալ իւրաքանչիւր բերդի ու վանքի տեղագրական դիրքի մասին:

Դժբախտաբար Հայկական Կիլիկիան չըրջանէն մենք չենք ունեցած ճարտարապետական ինքնուրոյն հսկայ կոթողներ, ինչպէս ունեցած է պատմական Հայաստանը. — Անիի, Գայիանէի, Ջուարթնոցի եկեղեցիները, Հաղբատի, Գլաճորի վանքերը: Մեր ունեցածները Կիլիկիոյ մէջ բերդեր են, դրեթէ բոլորն ալ Բիւզանդական, որ դեռ քիչ թէ շատ կանգուն կը մնան մինչեւ ցարդ. իսկ վանքերը դետնի հաւասար վիճակի մը մէջ դրեթէ հողակոյտեր են բացի Շուղրի վանքէն: Սկեւռայ, Կարմիր վանք, Դրազարկ, Արքակաղնի, Սաղրուլի վանքերը անճանաչելի են: Բարեբախտութիւն մը պիտի ըլլայ մեզի, եթէ իսկապէս կարենանք անոնց տեղը որոշել եւ հետազոտութիւններ կատարել:

Անդրադառնալով Արտաւազդ Սրբազանին Կոռիկոսի ամրոցներուն, պէտք է ըսել թէ հեղինակին տեղագրութիւնը ճիշտ է, եւ արդէն Կոռիկոսն ալ բոլոր Կիլիկիցիներուն ծանօթ է, բայց սխալ է ենթադրել թէ Կոռիկոսը եղած է շարունակ Կիլիկիան հող, ինչպէս Սրբազանը ըսել կ'ուզէ: Ռուբինեանց սկզբնական շրջանին Կոռիկոսի բուն տէրերը եղած են Խաչակիր ասպետները: Միայն վերջին ատենները, երբ Հեթումեան տոհմը Կիլիկիան աթոռը գրաւեց, այն ատեն Պապեռոնի Օշինները տէր դարձան Կոռիկոսի, Օշինները՝ որ արդէն ըսել է Բիւզանդացիներու եւ կամ Խաչակիրներու ենթակայ հայ պարոններ:

Կոռիկոսի բնակիչները երբեք հայեր չեն եղած: Հոն կը գտնուէին զինուորական բերդապահներ, մաքսային պաշտօնեաներ

եւ շատ քիչ թիւով վաճառական հայեր, բայց երբեք ընդունելի չէ ըսել, «քանզի մինչեւ 1375 ու անկէ յետոյ դէթ կէս դար եւս Կոռիկոս հայոց բնակավայր եղած էր իր բերդերով ու բերդատէր իշխաններով» եւ այլն: Ոչ մի պատմական տուեալ ունինք հաստատելու համար բոլոր այդ ըսուածները: Նոյնպէս Սրբազանը իր անձնական տեսութեամբ խոշոր սխալի մը մէջ ինկած է, երբ կ'ըսէ. — «Կոռիկոս քէն Ալեքսանտրէթի հիւսիսային կողմը եւ բաւական մօտ, բայց մեր հոգեւոր իրաւասութեան սահմաններէն դուրս մնացած ըլլալով, դժբախտաբար մենք դիւրութիւն չունեցանք անձամբ տեսնելու...»: Թող ներուի մեզի ըսելու, թէ Սրբազանը հոս արդէն իսկ կը յայտնէ Կիլիկիոյ մասին իր ունեցած թերի պատմագիտութիւնը:

Կոռիկոսը Ալեքսանտրէթի հիւսիսային կողմը եւ բաւական մօտ չի գտնուիր: Կոռիկոսը Ալեքսանտրէթի ճիշտ ուղիղ դիմի մը վրայ արեւմտեան կողմը եւ եօթը օրուան հեռավորութեան մը վրայ կը գտնուի: Ալեքսանտրէթէն դէպի արեւմուտք նախ Մամեստիա, Ատանա, Տարսուս. յետոյ Մերսին, Պոմպէպոլիս, Այաչ ու Կոռիկոս:

Կերեւի որ Սրբազանը Այաչն ու Այասը շփոթելով Կոռիկոսը այնքան մօտեցուցած է Իսկէնտէրունի:

Ահա թէ ո՛ր կը տանի տեղագրական սըխալ հասկացողութիւն մը, եւ ի՛նչպէս կըրնայ մտքերու մէջ պատմական շփոթներ ստեղծել:

Կոռիկոսի եւ շրջակայ աւերուած աւաններու մասին ուրիշ առիթով պիտի անդրադառնանք:

Տոթ. 8. ՏԷՐ ԴԱԶԱՐԵԱՆ

Հալէպ

(Շարունակելի)

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՒ

Պ Ր Պ Տ Ո Ւ Մ Ի Փ Ո Ր Ջ Ե Ր

Մ Ա Ս Ն Բ

(Շար. տե՛ս Բազմավէպ 1947, էջ 169)

ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ
ՇԷՆՔԵՐՈՒ ՎՐԱՅ

Ա. – ԳԱՌՆԻՒՆ ՏԱՃԱՐԸ:

Գառնի Տաճարը, որ Տրդատայ թախտանուամբ ծանօթ է հաւարակութեան⁽¹⁰⁾, թէեւ հռոմէական շրջանի շինութիւն մըն է, սակայն հելլենական ճարտարապետութեան մէկ նմոյշն է հայաստանի մէջ՝ յոնիական ոճով և մասամբ հռոմէական համեմատութիւններով:

Բացայայտ է որ զայն շինող ճարտարապետը հելլենական ոճի վարպետ մըն է եղած և շատ հաւանաբար ալ օտար ճարտարապետ մը, որ Տրդատ Ա. բերել տուած ըլլայ Հռոմէն 66 թուին⁽¹¹⁾:

Այս շէնքը հելլէն – հռոմէական շինուածաձեւին, «վկայ-շէնք» է մեր երկրին մէջ: Չայն՝ դիտումնաւոր կերպով է որ հոս կը ներկայացնեմ, ցոյց տալու համար թէ հայ ճարտարապետը ունէր իր առջեւ, ոչ

միայն հելլէն – հռոմէական շինարուեստի նմոյշ մը, այլ նաեւ ճարտարապետական համեմատութեանց և ներդաշնակութեանց ակնառու օրինակ մը: Մենք գիտենք թէ, շինուածաձեւի մարդին մէջ, հայկական ճարտարապետութիւնը օգտուած՝ և նոյն իսկ ազդուած է հելլէն – հռոմէական շինութիւններէն: Այս ուրեմն պատճառ մը չկայ որ ան փորձած չըլլայ իր օգտուած ոճերու համեմատութիւնները և ներդաշնակութեան կանոնները պատշաճեցնելու հայկական շինուածքին, շինուածանիւթին թոյլատրած սահմաններուն մէջ:

Գառնիի հեթանոսական տաճարը, ներդաշնակութեան համեմատութիւններու նկատմով կ'իյնայ հելլենական ներդաշնակութեան կանոններու տակ, քանի որ ան յոնիական ոճէն կը սեռի: Հակառակ ասոր՝ յատկապէս ընդհանուր համաչափութիւնը, այսինքն՝ երկարութեան շարքին հետ ունեցած յարաբերութիւնը որ կը ներկայանայ սա համեմատութեամբ

$$\frac{ԻԱ}{ԻԳ} = \frac{ԻԱ}{ԻԲ} = 1.618$$

չի համապատասխաներ բուն հելլենական համեմատութեան որ պիտի տար.

$$\frac{ԻԱ}{ԻԳ} = \frac{ԻԱ}{ԻԲ} = 2$$

10. Պունեաթեան. «Գառնի Հեթանոսական Տաճարը» հրատարակութիւն Միւրնեան Ֆրոնտի. Երեւան 1933.

11. Հակառակ Մովսէս Խորենացիի (Ա. 12) յիշատակութեան թէ այս շէնքը շինուած և կամ նորոգուած ըլլայ Տրդատ Գ. ինչպէս հանդիմանոր ճարտարապետական կերտուածքը ցոյց կու տայ թէ ան Ա. դարու շէնք մըն է, որուն վրայ՝ հաւանաբար Միսն Տրդատ ալ նորոգութիւններ ըրած ըլլայ:

Գառնիի մէջ եղած համեմատութիւնը, ոսկեղէն հատուածի համեմատութիւնն է:

Միւս կողմէ, հելլենական բուն համեմատութեամբ պիտի ունենայինք՝

$$\overline{U\Gamma} = \sqrt{5}$$

մինչդեռ Գառնի տաճարին վրայ կը գըտնենք.

$$\overline{U\Gamma}^2 + \overline{I\Gamma}^2 = \overline{U\Gamma}^2$$

արդ՝ տեսանք թէ

$$\frac{\overline{IU}}{\overline{I\Gamma}} = 1.618$$

այնպէս որ եթէ $\overline{I\Gamma}$ առնենք որպէս միւթիւն

$$\overline{I\Gamma} = 1$$

կ'առնենք՝ $\overline{IU} = 1.618 = \Phi$

ինչ որ մեզ թոյլ պիտի տայ գրելու վերի հաւասարութիւնը Φ ի համեմատ

$$\Phi^2 + 1 = \overline{U\Gamma}^2$$

արդ՝ այս աշխատութեան սկիզբը տեսանք թէ

$$\Phi^n = \Phi^{n-1} + \Phi^{n-2}$$

այսինքն թէ $\Phi^2 = \Phi^{2-1} + \Phi^{2-2}$

որ ուրիշ բան չէ եթէ ոչ՝

$$\Phi^2 = \Phi^1 + \Phi^0 = 1.618 + 1$$

այսինքն

$$\Phi^2 = 2.618$$

ուսկից

$$\overline{U\Gamma} = \sqrt{\Phi^2 + 1} = \sqrt{2.618 + 1} = \sqrt{3.618}$$


$\overline{U\Gamma}$ -ի այս հայկական Գառնի տաճարի արժէքը կը տարբերի հելլենական համեմատութեան $\sqrt{5}$ արժէքէն և աւելի կը մօտե-

նայ ութանկիւն աստղի $\sqrt{2}$ ի համեմատութեան և կամ քառակուսիի համեմատութեան: Այս արժէքը $\sqrt{2}$, արդէն կը գըտնենք Սթիլոպոսի երկայնութեան և լայնքի համեմատութեան մէջ: Իսկ ութանկիւն աստղի գործածութիւնը պիտի գտնենք աւելի հեռուն երբ պիտի քննենք խաչաձեւ եկեղեցիները:

Այս շէնքին ոճը տրուած ըլլալով, մեզի համար համեմատարար դիւրին կ'ըլլայ անոր ներդաշնակ գիծը գծել: Այս գծադրութիւնը (պատ. 1) մեզի թոյլ պիտի տայ, ուղղակի շէնքին ճակտի համեմատութիւնները՝ յատակագրի համեմատութիւններուն համապատասխան մէջտեղ բերել:

Ներդաշնակ գիծը, ըստ Moessel-ի դրուած, պիտի կազմէ $\overline{U\Gamma}$ տրամագիծը ($\overline{U\Gamma} = \overline{IU} + \overline{I\Gamma}$), առաջնորդ շրջանակի մը ներգծուած տասնակողմանի բազմանկիւն մը: Այս տասնակողմանի բազմանկիւնը իրականին մէջ երկու հնգանկիւններու (pentagramme) իրարու վրայ դրուելովը գոյացած է: Այս հնգանկիւններու (հինգկողմանի) կողմերուն իրար հանդիպած կէտերը շրջանակին կեդրոնին միացնելով, Cella-ին վրայ կը ստացուի ՀՂ հատուածը որ պիտի տայ սիւններու միջեւ երած անջրպետին մեծութիւնը: Բացի ասկէ երկու հնգակողմանիներու խարխիւները կու տան տաճարին երկու ճակատներուն սիւներու շարքերը:

Գառնի տաճարը ըլլալով հելլեն հռոմէական յղացումի մէկ արտայայտութիւնը, ճարտարապետը անոր համեմատութեանց կազմութեան մէջ հաշուի առած է երեք եզրեր՝ ուսողական, գեղեցկագիտական և բնազանցական: Այսինքն՝ ճշմարիտը, գեղեցիկը և ներդաշնակը հոն արտայայտուած են և կը կազմեն միոռքիւն մը: Հոն ճարտարապետը և քանդակագործը զուգահեռաբար աշխատելով կերտած են՝ երաժշտական համանունագի մը նման «Տաճար-կեանք»ը, որ Գառնի «Հրուանգանին» վրայ, իսկ ձորի զլխուն, քիչ մը առանձնացած գիւղի մէջ, իր երգը կը թրթռացնէ միջոցին մէջ:



Պատկ. 1. - Գառնիի հիթանոսական Տաճարի մերդաշնակ գիծը՝ ըստ Moesselի տասնակողմանի մը մէջ գծուած, յատակագրի մերդաշնակ գիծը կու տայ ճակատի համեմատութիւնները:

Բ. - ԱՆԻԻ ՀՈՎՈՒԻ ԵԿԵՂԵՑԻՆ.

Աւելի վերը ըսի թէ մեր ճարտարապետութիւնը իր շինութեան այլոգան ձեւերովը, ուղղանկիւն, քառանկիւն, կլոր, խաչաձեւ, բազմանկիւն, կը ներկայացնէ մաթեմատիկական աստիճանաւորում մը: Հայկական ներդաշնակութեան կրօնը ներու պրպտումին մէջ ժամանակաշրջաններէ

$$\begin{aligned} \overline{I\Gamma} &= \overline{I\Gamma} & \frac{\overline{IU}}{\overline{I\Gamma}} &= \frac{\overline{IU}}{\overline{I\Gamma}} = \Phi = 1.618 \\ \overline{I\Gamma} &= \frac{\overline{IU}}{\Phi} & \frac{\overline{IU}}{\overline{I\Gamma}} &= \frac{\overline{IU}}{\overline{I\Gamma}} = \Phi = 1.618 \\ \frac{\overline{IU}}{\overline{I\Gamma}} &= \frac{\overline{IU}}{\overline{I\Gamma}} = \Phi = 1.618 \\ \frac{\overline{IU}}{\overline{I\Gamma}} &= \frac{\overline{IU}}{\overline{I\Gamma}} = \Phi = 1.618 \\ \frac{\overline{IU}}{\overline{I\Gamma}} &= \frac{\overline{IU}}{\overline{I\Gamma}} = \Phi = 1.618 \end{aligned}$$

տեղի շինութեան ձեւերն են որ մեզի համար կարեւոր են, և անոնք են որ նկատի պիտի առնենք, որովհետեւ այս զանազան ձեւերը կը գտնենք գրեթէ բոլոր շրջաններուն մէջ ալ:

Այս նկատողութեամբ, հայկական առաջին շէնքը որ պիտի քննենք, պիտի ըլլայ բազմանկիւն եկեղեցի մը, որուն իրրեւ տիպար կ'առնենք Անիի Հովուի եկեղեցին որ

Հայկական ճարտարապետության իրական գոհարներէն մին է: Հակառակ իր չափազանց նիւթական փոքրիկութեանը, ան իր մէջ կը խտացնէ թէ՛ քերթիքական շինուածածեւի վարպետութիւն ու ճարտարութիւն իր կեդրոնաձիգ վեց կամարներովը և թէ՛ կազմութեան ու կարգաւորումի ներդաշնակութիւնը:

Ընդհանուր ներդաշնակութեան տեսակէտով ան կը ներկայացնէ նուազական շարք (serie décroissante) մը՝ ըլլայ զանգուածներու շարուածքի տեսակէտով, որ ընդհանրապէս Հայկական շինութիւններու կանոնն է, ըլլայ զարդարանքի և լոյսի խաղերու կազմութեան տեսակէտով: Քանի չէնքը կը բարձրանայ՝ զարդարանքները կը նուազին և շինութիւնը կը պարզուի: Մինչդեռ առաջին յարկը տասներկու թեւնոց աստղին առաջ բերած զանգուածներու խաղերէն ու սիւներէն կը յորդի զարդարուն, երկրորդ յարկը աւելի ժուժկալ, նուազ զարդարուն է, իսկ կաթողիկէն, ուղղակի պարզ թմբուկ մըն է որմնաշար, ուր ոչ մէկ զարդ և կամ լոյսի խաղ կու գայ որմին պարզութիւնը խանգարելու: Այդպէս ճարտարապետը կը յաջողի դիտողին բոլոր ուշադրութիւնը կեդրոնացնել առաջին յարկի վրայ և անմիջապէս զայն տպաւորել առանց ժամանակ ձգելու որ միւս մասերու պարզութիւնը հակադէտ: Ու հակառակ որ չէնքը փոքր մատուռ մ'ըլլայ, մեծ եկեղեցիի մը չափ կը տպաւորէ դիտողը:

Թերեւս օգտակար ըլլայ յիշել թէ՛ Հովոռի եկեղեցին շինուած է մասնաւորի մը հաշւոյն՝ Անիի պարիսպներէն դուրս (պատկ. 2 և 3): Այս պարագան ճարտարապետին կու տար յղացումի ազատութիւն, պաշտօնական շինուածածեւերէն հեռանալու, իր ըմբռնումները գործադրելու և մանաւանդ իր զգացողութեան ազատ թռիչք տալու:

Եթէ բազմաթեւք Հովոռի եկեղեցիին տասներկուկողմեան յատակագիծը Վիթրիւվի նկարագրած հելլենական թատրոններու ներդաշնակ գիծի գրութեան հետ, պիտի

տեսնենք թէ Հովոռի-եկեղեցիին անձանօթ վարպետը ներշնչուած է հելլեն-հռոմէական ներդաշնակ գիծի կանոններէն:

Արդարեւ Վիթրիւվ կը նկարագրէ հելլենական դասական ներդաշնակ գիծի ձեւը, բոլորակ թատրոններու համար գործածուած: Այս ներդաշնակ գիծը կը կայանայ առաջնորդ - շրջանակի մը մէջ երեք քառակուսիներ ($\sqrt{2}$) գծելուն մէջ, մինչդեռ հռոմէական գրութիւնը կը գծէ չորս հաւասարակողմ եռանկիւններ:

Եթէ քննենք Հովոռի-եկեղեցիին աստղանման տասներկու թեւերը՝ պիտի տեսնենք թէ անոնք կը կազմեն հելլենական գրութեամբ գծուած ներդաշնակ գիծին երեք քառակուսիներու զաղաթները. Ա. Դ. Ե. Ժ, Բ. Ե. Ը. Ի, և Գ. Զ. Թ. Լ (պատկ. 4): Այս քառակուսիներուն կողմերը, առաջնորդ-շրջանակին շառաւիղին հետ ունեցած համեմատութիւնն է

$$Ա.Դ = Բ.Ե = Գ.Զ = \sqrt{2} \times Ա.Կ$$

այսինքն թէ այդ համեմատութիւնն է $\sqrt{2}$


$$\frac{Ա.Դ}{Ա.Կ} = \frac{Բ.Ե}{Բ.Կ} = \frac{Գ.Զ}{Գ.Կ} = \sqrt{2}$$

Այս քառակուսիներու կողմերուն իրարու հանդիպած կէտերը, Ա. Գ. Ե. Ի. Թ. Լ. կու տան ներքին վեց կողմանի աստղին գաղաթները:


Փոքրիկ շառաւիղով ներքին առաջնորդ-շրջանակը, որուն համեմատութիւնը մեծին հետ է

$$\frac{Ա.Կ}{Խ.Կ} = \frac{1}{2}$$

կը կտրէ տասներկու մեծ շառաւիղները Խ. Ծ. Կ. Զ. Դ. Ը. Մ. Թ. Ն. Ծ. Ո. Կէտերուն վրայ, որոնցմէ Ծ. Զ. Դ. Մ. Ն. Ո. կէտերը կու տան որմերուն զէպի ներս յառաջացած ծայրագոյն կէտերը և ներքին



ՊԱՏՏ. 2. - Հովոռի եկեղեցին իր մանրամասնությամբ և գեղարվեստականությամբ Բ. Երանյանի կողմից նկարված է: Պատկերը հիմնված է 1947 թ. հունիսի 1-ին հրատարակված «Հայկական ճարտարապետություն» ամսագրի 2-րդ համարի վրա:




ՊԱՏԿ. Յ. - Հովուի եկեղեցին՝ անբախտ վիճակում մէջ. լուսանկար
Հ. Գ. Նահապետեանի:

կեղրոնաձիգ վեց կամարներուն սկզբնառութեան կէտերը. (պատկ. 5):

Ուրեմն Հովուի եկեղեցիին տասներկու թեւանի աստղաձեւ յատակագիծը, հելլե-

ցուածքին քննութիւնը մեզի պիտի տայ զանգուածներու համեմատութիւնը ճշտող ներդաշնակ գիծը՝ որ պիտի որոշէ շէնքին բարձրութիւնը և անոր երեք մասերու զան-



Պատկ. 4. - Ամիի հովուի եկեղեցիին յատակագիծին մերդաշնակ գիծը. առաջնորդ-շրջանակի մը մէջ գծուած տառներկու թիւնոց աստղ մը, ըստ հելլենական դրութեան. ճասնելու թիւնոց աստղը կազմուած է 3 քառակուսիներու իրարու վրայ դրուելովը. յարաքանչիւր քառակուսիի կողմի արժէքն է $\sqrt{2} \times$ ճառագայթ առաջնորդ-շրջանակի:

նական ներդաշնակ գիծի հիման վրայ և $\sqrt{2}$ ի համեմատութեամբ կառուցուածք մըն է:

Այս յատակագիծին վրայ շէնքին կառու-


ցուածներուն ծաւալը: Այս ներդաշնակ գիծը ակնառու կերպով կը համապատասխանէ Lurd-ի զուգարարձ (isocèle) եռանկիւններու դրութեան: Արդարեւ (պատկ. 6)

բաժնենք ԱԲ խարիսխը միջին և ծայրագոյն համեմատութեան, այսինքն 1.618-ի, կը ստանանք է և է' կէտերը

$$\frac{ԱԲ}{ԱԷ} = \frac{ԲԱ}{ԲԷ} = 1.618$$

խարիսխին կեղրոնը Մ, Ս. և Բ կէտերուն շուրջ շրջելով կը ստանանք ԱԲ խարիսխին

շարունակութեանը վրայ Մ կէտերը, խարիսխէն դուրս: Միեւնոյն գործողութիւնը ընելով է և է' կէտերուն համար, կը ստանանք խարիսխի շարունակութեանը վրայ է և է' կէտերը: Խարիսխէն դուրս գտնուած Մ կէտերը կեղրոն առնելով և Մ է, Մ է' շառաւիղով երկու աղեղներ՝ գծելով կը ստանանք անոնց իրարու հանդիպած կէտը Հ,



Պատկ. 5. - հովուի եկեղեցիին առաջին յարկի յատակագիծը՝ պատրաստուած Թ. Թորամանեանէ:

